

**ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
(ընդունված 2010 թ. հունիսի 10-ին)**

**և**

**ՌԱԴԻՈՅԻ և ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ  
ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՑՄԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Վերլուծությունը պատրաստել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական  
համալսարանի Լրագրության ֆակուլտետի լրատվական իրավունքի և  
քաղաքականության կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր, լրատվական իրավունքի  
ամբիոնի վարիչ, Իրավաբանների միջազգային հանձնաժողովի անդամ դր. Անդրեյ  
Ռիխտերը

15 հոկտեմբեր, 2010 թ.

Հեռարձակման մասին օրենքը, որը վերլուծված է սույն փաստաթղթում, կոչվում է «Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (այսուհետ՝ «Օրենք»), որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2010 թ. հունիսի 10-ին:

### **Հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը**

1) Օրենքի 22-րդ հոդվածով («Հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը») նախատեսվում է այնպիսի ծրագրերի և դրանց բաղադրիչների երկար ցանկ, որոնց հեռարձակումը հանգեցնում է **լիցենզիայի դադարեցման**: Չնայած, ներկայումս դա իրականացվում է ոչ բացառապես ՀՌԱՀ-ի հայեցողությամբ (ի տարբերություն նախկինի), այլև՝ *դատական ընթացակարգով*, 22-րդ հոդվածի դրույթների մեկ խախտման հիման վրա ՀՌԱՀ-ի դիմումի հիման վրա (ինչպես նախատեսված է 58-րդ և 61-րդ հոդվածներում): Կարծում ենք, որ նշված փոփոխությունը բավարար չէ, քանի որ այն ցանկացած պարագայում հանգեցնում է լրագրողների ինքնագրաքննության և լրատվամիջոցների ազատության սահմանափակման: Դատարանը պետք է հետևի օրենքի պահանջին, սակայն այս առումով օրենքը զգալիորեն ցածր է ժողովրդավարության բնագավառում ԵԱՀԿ-ի ստանդարտից:

2) Այն նորմի շրջանակը, որի համաձայն նույնպես պատժվում է «**քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը**», չափազանց լայն է, քանզի դրանով նախատեսվում է, որ քրեորեն պատժելի որևէ արարք (օրինակ՝ մեքենաների անօրինական կայանման) անելու կոչեր տարածելն ըստ էության համարվում է հանցագործություն, որի համար հեռարձակողը կարող է զրկվել լիցենզիայից:

3) Էլ ավելի լուրջ հարցեր են ծագում այն առումով, որ նմանատիպ պատիժ է նախատեսված «**պոռնկագրություն տարածելու**» համար: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, երկրում հանցագործություն է համարվում միայն «պոռնկագրական նյութեր կամ առարկաներ, այդ թվում՝ տպագիր հրատարակություններ, կինոյի և տեսաֆիլմերի նյութեր, պատկերներ կամ պոռնկագրական բնույթի այլ առարկաներ ապօրինի տարածելը, գովազդելը, իրացնելը, ինչպես նաև այդ նպատակով պատրաստելը»:<sup>1</sup> Ուստի, քրեական օրենսգրքի ձևակերպումից բխում է, որ «*ապօրինի պոռնկագրությունից*» զատ կա նաև «*օրինական պոռնկագրություն*»: Եթե

<sup>1</sup> Տես <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1349&lang=eng>

Հայաստանի գործող օրենսդրությամբ նախատեսված չէ «ապօրինի պոռնկագրության» հստակ սահմանում (օրինակ՝ 263-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի նեղ շրջանակը), ցանկացած այլ պոռնկագրություն օրինական է: Հետևաբար, Օրենքով նախատեսված բացարձակ արգելքն իրավաբանորեն կասկածահարույց է:

4) «**Բռնության և դաժանության պաշտամունք** պարունակող կամ քարոզող հաղորդումներ հեռարձակելու» արգելքը չափազանց լայն է դատարանում գործնական կիրառություն ստանալու տեսակետից, և այստեղ նույնպես առկա է կամայական որոշումներ կայացնելու հնարավորություն:

5) Նույնը վերաբերում է **անմեղության կանխավարկածի խախտման** խնդրին: Սույն վերլուծության նպատակը սահմանադրաիրավական վեճը լուծելը չէ, սակայն մենք խորապես համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 21-րդ հոդվածը, որով (1-ին մաս) նախատեսվում է, որ «հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով», չի կարող որևէ առնչություն ունենալ զանգվածային լրատվամիջոցների բնագավառին:<sup>2</sup> Անմեղության կանխավարկածի սահմանադրական այդ սահմանումը չի ներառում լրագրողներին կամ լրատվամիջոցները, քանի որ նրանք չեն կարող «մեղադրել» բառի իրավական իմաստով որևէ մեկին «մեղադրանք ներկայացնել» (ընդ որում, կասկածից վեր է այն հանգամանքը, որ Սահմանադրությունն իրավական փաստաթուղթ է): Ցանկացած պարագայում, Օրենքի 22-րդ հոդվածի նորմը անմեղության կանխավարկածի սկզբունքի կամայական կիրառության հնարավորություն է ստեղծում, որը կարող է ծանր հետևանքները ունենալ լրատվամիջոցների համար:

***Առաջարկություն.***

- *Վերացնել հեռարձակողների կողմից 22-րդ հոդվածի խախտման դեպքում արտահայտվելու ազատությունը և զանգվածային լրատվամիջոցների ազատությունը կամայականորեն արգելափակելու հնարավորությունը:*
- *Պետք է բացառել լրագրողների ինքնազրաքննության հնարավորությունը՝ հաշվի առնելով 22-րդ հոդվածի խախտումների, օրինակ՝ զրպարտության կամ այլոց իրավունքները խախտելու համար հեռարձակողների նկատմամբ կտրուկ միջոցներ ձեռնարկելու*

<sup>2</sup> Տես, օրինակ, (անգլերեն) «Recommendation by the Judicial Chamber for Information Disputes under the President of the Russian Federation» No. 3 (10), 24 դեկտեմբեր 1997 թ., “On the Application of the Principle of Presumption of Innocence in Journalists’ Activity” (Զանգվածային լրատվամիջոցների իրավունքի և քաղաքականության կենտրոնի հարցման հիման վրա), ինտերնետում՝ [http://medialaw.ru/e\\_pages/laws/russian/jcr-10-97.htm](http://medialaw.ru/e_pages/laws/russian/jcr-10-97.htm)

*հանգամանքը:*

### **Հաճախականությունների ցանկը**

Ողջունում ենք այն դրույթի վերականգնումը, որի համաձայն Ազգային հանձնաժողովը «տարին մեկ հրապարակում է եթերային հաճախականությունների ամբողջական ցանկը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կազմած և պարբերաբար իրեն տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված եթերային հաճախականությունների ցանկը» (36-րդ հոդվածի 6-րդ մաս): Որքան գիտենք, հաճախականությունների նման ցանկ դեռևս չի հրապարակվել: Հեռարձակման տիրույթի աուդիտը, որի արդյունքները 2009 թվականին հաստատել է Եվրոպայի խորհրդի անկախ փորձագետը, չի հրապարակվել:

#### **Առաջարկություն.**

- *Անհապաղ կերպով հրապարակել հաճախականությունների ցանկը՝ ինչպես նախատեսված է օրենքով:*

### **Լիցենզավորումը և բազմակարծությունը**

Ողջունում ենք այն հանգամանքը, որ օրենքի 49-րդ հոդվածով այժմ նախատեսված է Ազգային հանձնաժողովի պարտավորությունը՝ լիցենզավորման գործընթացում հաշվի առնելու բազմակարծությունը խթանելու՝ դիմողի կարողությունը: Մինևույն ժամանակ, «եթերում կարծիքների բազմազանությունը խթանելու՝ ՀՌԱՀ-ի պատասխանատվությունը վերականգնելու» մասին մեր առաջարկությունը վերաբերում էր օրենքի մեկ այլ մասի՝ 36-րդ հոդվածին («Ազգային հանձնաժողովի գործառույթները»): Օրենքի նպատակը պետք է լինի առաջին հերթին պարտավորեցնել հանրային մարմնին (այս պարագայում՝ ՀՌԱՀ-ին), որպեսզի վերջինս խթանի բազմակարծությունը, սակայն ոչ՝ այդ բեռը դնել մասնավոր հեռարձակողների վրա:

Մեր առաջարկությունն ի սկզբանե հետևյալն էր. «վերականգնել այն նորմը, որի համաձայն Ազգային հանձնաժողովը պարտավոր է հավուր պատշաճի բացատրել հեռարձակման լիցենզիայի տրամադրման մասին դիմումը մերժելու՝ իր որոշումը»: Բանավեճից հետո Օրենքում ընդունվել է հետևյալ ձևակերպումը. «Ազգային հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատշաճ հիմնավորված և պատճառաբանված: Ազգային հանձնաժողովն ապահովում է իր որոշման հրապարակայնությունը»: Կարծում ենք, որ դա նշանակում է, թե Ազգային

հանձնաժողովը պետք է հավուր պատշաճի հիմնավորի և պատճառաբանիա թե լիցենզառու ընտրելու, թե լիցենզիայի տրամադրումը մերժելու մասին իր որոշումները: Եթե այդպես է, ապա վերոհիշյալ փոփոխությունը ողջունելի է և համահունչ կլինի Հայաստանի նկատմամբ լիցենզավորմանն առնչվող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը:

*«Դատարանը համարում է, որ լիցենզավորման այնպիսի ընթացակարգը, որի շրջանակներում լիցենզավորող մարմինը չի նշում իր որոշման պատճառները, չի ապահովում բավարար պաշտպանություն արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքի նկատմամբ հանրային մարմնի կանայական միջամտությունից»:<sup>3</sup>*

ՀՌԱՀ-ը պետք է լիարժեքորեն հիմնավոր պատճառներ նշի ոչ միայն որևէ մեկին ընտրելիս, այլ նաև՝ լիցենզիայի տրամադրումը մերժելիս: Մելտեքսի վերը մեջբերված գործը մենք այդպես ենք ընկալում (Եվրոպական դատարանի որոշման 82-րդ և 83-րդ կետերը՝ միասին վերցված): Ահավասիկ մեջբերումը. «Այսպիսով, լիցենզավորող մարմինը, տվյալ դեպքում՝ ՀՌԱՀ-ը, որևէ կերպ չի պատճառաբանել իր որոշումները, որոնցով դիմող ընկերությանը քանիցս մերժել է հեռարձակման լիցենզիայի տրամադրումը»:

Օրենքը պետք է ներառի որոշակի չափորոշիչներ, որոնցով ՀՌԱՀ-ը կընտրի, թե օտարերկրյա կամ միջազգային որ հեռուստահաղորդումներն են ընտրվելու վերահեռարձակման համար (48-րդ հոդված): Այդ չափորոշիչների շարքում պետք է լինի կարծիքի բազմազանությունը:

#### **Առաջարկություն.**

- ՀՌԱՀ-ին պարտավորեցնել՝ հեռարձակողների լիցենզավորման գործընթացում խթանելու քաղաքական բազմակարծությունը և կարծիքի բազմազանությունը:
- Ապահովել, որպեսզի լիցենզիայի տրամադրումը մերժելիս ՀՌԱՀ-ը համարժեքորեն բացատրի մերժման պատճառները:

### **Հայրենական արտադրության ծրագրերի քվոտան**

8-րդ հոդվածով այժմ արդեն նախատեսվում է, որ «հեռուստառադիոընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռադիոալիքով) չի կարող ամսական ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս լինել» (նախկինում նախատեսվում էր «չի կարող 65 տոկոսից պակաս լինել»): Նախատեսված չէ որևէ բացառություն (օրինակ՝ լուրերի, սպորտային միջոցառումների, խաղերի, գովազդի և

<sup>3</sup> Տես Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի գործով դատավճռի 68-րդ կետը (զանգաստ թիվ 32283/04), դատավճիռը կայացվել է 2008 թ. հունիսի 17-ին, ինտերնետում՝ <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=2&portal=hbk&Action=html&highlight=ARMENIA%20%2010&sessionid=67430&skin=hudoc-en>

հեռուստախանութների համար): Այդ քվոտան չի թեթևացնում հայրենական ծրագրեր արտադրելու (կամ դրանց արտադրությունը պատվիրելու)՝ հեռարձակողների համար նախատեսված տնտեսական լուրջ բեռը: Նույնիսկ Արևմտյան Եվրոպայի երկրներում, որտեղ տնտեսությունը (այդ թվում՝ հեռարձակողների տնտեսական վիճակը) ավելի բարվոք վիճակում է, քան Հայաստանում, օրենքով հայրենական (ավելի ճիշտ՝ եվրոպական) արտադրության ծրագրերի 50 տոկոսից ավելի բարձր պահանջ չի սահմանվում, ընդ որում՝ նույնիսկ այդ նպատակը ցայսօր իրագործելի չէ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Հունաստանը և Իսպանիան: Ջարմանալի չէ, որ Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիայով (10-րդ հոդվածի 1-ին մաս՝ «Մշակութային նպատակները») այս կապակցությամբ նախատեսվում է հետևյալը.

*«Հեռարձակող յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավոր է, եթե գործնականում դա հնարավոր է, պատշաճ միջոցներով ապահովել, որպեսզի իր ընդդատության ներքո գործող յուրաքանչյուր հեռարձակող եվրոպական արտադրության աշխատանքների համար նախատեսի հեռարձակման ժամանակի մեծ մասը, բացառությամբ այն ժամանակը, որը նախատեսված է լուրերի, սպորտային միջոցառումների, խաղերի, գովազդի, հեռուստատեսության ծառայությունների և հեռուստախանութի համար: Հաշվի առնելով հեռարձակողի տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային պարտավորությունները հանդիսատես հանրության առջև՝ այդ համամասնությունը պետք է իրագործվի աստիճանաբար՝ պատշաճ չափորոշիչների հիման վրա»:*

**Առաջարկություն.**

- *Դիտարկել հայրենական արտադրության ծրագրերի մասով մասնավոր հեռարձակողների համար սահմանված քվոտան իջեցնելու հնարավորությունը: Ծրագրերի որոշ տեսակների համար քվոտայից նախատեսել բացառություն:*
- *Ներպետական և եվրոպական արտադրության ծրագրերի քվոտան պետք է սահմանվի փուլերով՝ տարեցտարի աճով, մինչև այն հասնի 50 տոկոսի:*

**Հովանավորությունը**

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված է «հովանավորության» սահմանումը, որը ներկայումս ամբողջովին համընկնում է Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիայով (2-րդ հոդվածի «հ» կետ) նախատեսված սահմանմանը: Ընդհանուր առմամբ Օրենքի այդ հոդվածի դրույթները համահունչ են Կոնվենցիային: Միևնույն ժամանակ, Կոնվենցիայի որոշ կարևոր դրույթներ բացակայում են. օրինակ, Օրենքով չի նախատեսվում, որ *հովանավորվող ծրագրերը չպետք է խրախուսեն հովանավորի կամ երրորդ անձի ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, գնումը կամ վարձակալությունը,*

մասնավորապես՝ նման ծրագրերում հատուկ գովազդային հղումներ անելով այդ ապրանքներին կամ ծառայություններին (ի տարբերություն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 3-րդ մասի):

**Առաջարկություն.**

- Ներդնել հովանավորության և գովազդի՝ եվրոպական պետությունների համար ընդհանուր այն կանոնները, որոնք նախատեսված են Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիայով:
- Դիտարկել Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիան ստորագրելու և վավերացնելու նպատակահարմարությունը:<sup>4</sup>

**Օրենքում բացակայող հիմնական կետերը**

Օրենքը չի անդրադարձնում կամ բավականաչափ մանրամասնորեն չի կարգավորում Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի և փորձագետի կողմից նախկինում ներկայացված որոշ առաջարկություններ.

- Հստակորեն տարբերակել արբանյակային, բջջային և առցանց հեռարձակման կարգավորումը ոչ գծային տեսալսողական լրատվամիջոցների ծառայություններից:
- Իրավական հիմքեր սահմանել թվային հեռարձակման ոչ պետական մուլտիպլեքսային օպերատորների ստեղծման համար:
- Կոնկրետացնել ազգային և մայրաքաղաքային (Երևանի) մուլտիպլեքսներում ռադիո ծրագրերի թիվը և թեմատիկ ուղղությունը:
- Փոխել Հանրային հեռուստատեսության և ռադիոյի, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ֆինանսավորման համակարգը՝ ինքնաբերաբար երաշխավորելու դրանց ֆինանսական անկախությունը պետությունից:
- Բարեփոխել Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի անդամների ընտրության և նշանակման կարգը՝ նախատեսելու հանրային հեռարձակման բազմակարծության հնարավորությունը:

Օրինակ, Օրենքի 62-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսվում է, որ «մինչև 2015 թվականի հունվարի 1-ը իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանց ստեղծելու համար օրենքով կսահմանվեն մուլտիպլեքսորի

<sup>4</sup> Տես. <http://conventions.coe.int/treaty/Commun/ChercheSig.asp?NT=132&CM=1&DF=&CL=ENG> Այս առումով հարկ է նշել, որ չնայած որ Արևմտյան Եվրոպայի մի շարք պետություններ դեռ չեն ստորագրել նշված կոնվենցիան, նրանք միացել են Եվրոպական միության համանման իրավական փաստաթղթին՝ Տեսալսողական լրատվամիջոցների ծառայությունների մասին դիրեկտիվին («Audiovisual Media Services Directive»):

*լիցենզավորման կարգն ու պայմանները»*: Օրենքում կոնկրետացված չէ, թե երբ են այդ կարևոր պայմանները սահմանվելու օրենքով, կամ թե ինչու է դրանց ընդունումը ձգձգվում:

Չնայած հասկանալի է, որ իրավական բարեփոխումները հնարավոր չէ մի քանի օրում կատարել, և որ Կառավարությունը շտապում էր՝ նախքան մորատորիումի ավարտը հասցնելու ընդունել օրենքի նախագիծը, ցանկանում ենք ընդգծել, որ նախկինում արված առաջարկությունները հավաքվել էին ոչ թե քառսային, այլև՝ համալիր եղանակով, և ծառայեցվել էին օրենքի նախագիծը ԵԱՀԿ-ի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակին միայն: Ուստի, որոշ առաջարկություններ ընտրողաբար ներառելը տրամաբանական չէ:

*Օրինակ, իմաստ չունի հանրային հեռարձակողի նկատմամբ բացառիկ իրավասությունները խորհրդին վերապահելը (ինչպես արվել էր մեր նախկին առաջարկության համաձայն), եթե խորհուրդն ինքը չի ենթարկվում ժողովրդավարական բարեփոխումների:* Ուստի, կոչ ենք անում իշխանություններին՝ նշված բոլոր հարցերով զբաղվել միասնաբար, ընդունելով քաղաքականության փաստաթուղթ, որով կնախատեսվի նման փոփոխությունների կատարումը մոտ ապագայում կոնկրետ ժամկետում:

Արհամարիվել են նաև գրեթե բոլոր այն առաջարկությունները, որոնք ներկայացվել էին 2010 թ. մարտին դր. Քեթրին Նայման-Մետքաֆի և դր. Անդրեյ Ռիխտերի կողմից ռադիոյի և հեռուստատեսության թվային հեռարձակման համակարգի անցում կատարելու հայեցակարգի վերլուծության հիման վրա:<sup>5</sup> Միաժամանակ, Օրենքի համար որպես հիմք պետք է ծառայեր հենց նշված հայեցակարգը:

#### ***Առաջարկություն.***

- *Ընդունել քաղաքականության փաստաթուղթ, որով կնախատեսվեն մոտ ապագայում կոնկրետ ժամկետում հեռարձակման մասին օրենքում փոփոխություններ կատարելու նպատակները և ժամանակացույցը:*
- *Թույլատրել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին կից ներկայումս գործող աշխատանքային խմբին՝ աշխատելու Օրենքի հիմնարար վերափոխման ուղղությամբ, լիարժեքորեն հաշվի առնելով Աշխատանքային խմբի անդամների դիտողությունները և առաջարկությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և նրանց փորձագետների առաջարկությունները թե գործող օրենքի, թե ռադիոյի և հեռուստատեսության թվային հեռարձակման համակարգի անցում կատարելու հայեցակարգի վերաբերյալ:*

<sup>5</sup> Տե՛ս [http://www.osce.org/documents/html/pdftohtml/43565\\_en.pdf.html](http://www.osce.org/documents/html/pdftohtml/43565_en.pdf.html)